Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

07.02. 2019թ.
ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյան (ԳԱ), Ե. Մատասյան (ԳԱ)
Բ. Տեր-Թովմասյան (ԲԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. Մասնակցի հետ բանակցությունների վարման մասին

(Է. Շաքարյան)

1.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 568-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների որոշելու նպատակով անցկացվել է գների նվազեցման բանակցություններ:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնման ընթացակարգի մասով գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների ոչ մի մասնակից չի ներկայացել:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկությունները մնացել են անփոփոխ.

h/h	Մացնակցի անվանումը	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/
1	«Գրանտշին» ՍՊԸ	1777000
2	«Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ Առանց ԱԱՀ-ի	1480000
3	«ԱԲԱԿ» ՍՊԸ	1839600
4	«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ	1878000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Է. Շաքարյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

	Մասնակցի անվանումը	**Հայտի գնահատականը**
1	«Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ	Բավարար
2	«ԱԲԱԿ» ՍՊԸ	Բավարար
3	«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/10**» ծածկագրով գնման ընթացակարգի՝

-- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ –ն,

---2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԱԲԱԿ» ՍՊԸ –ն,

որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5,դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

5.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Վ. Գուլգուլյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ե. Մատասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան